ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան 13.06.2024թ.

1. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2024 թվականի հունիսի 13-ի հերթական նիստին.

ա) մասնակցում էին՝

Գ.Պապոյան	– ՀՀ էկոնոմիկայի նախարար, Խորհրդի նախագահ
Ն. Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Է. Հակոբյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Ա. Հարությունյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Լ.Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Տ.Հակոբյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ, Խորհրդի անդամ
Կ. Չիլինգարյան	- «Սպառողների խորհրդատվության կենտրոն» նախագահ, Խորհրդի անդամ
Է. Էլբակյան	- ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր , Խորհրդի անդամ

Ժ.Խառատյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի համակարգման և մեթոդաբանության վարչության պետ

Ա. Կոտոլյան – Տեսչական մարմնի ղեկավար

Ա. Մկրտչյան – Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Գ. Սահակյան - Խորհրդի քարտուղար

Ա. Սարգսյան - Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ

բ) բացակայում էին՝

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար, Խորհրդի անդամ

Կ.Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Խորհրդի անդամ

Հերթական նիստի օրակարգային հարցեր.

2. Օրակարգում ընդգրկված հարցերն էին՝

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:
Զեկուցող՝ Ա.Կոտոլյան

2. Թեր և գեր լիցքավորմամբ շահագործվող ստուգաչափված չափման միջոցների վերաբերյալ քննարկում:
Հարցը ներկայացնող՝ Ա.Կոտոլյան

3. Արդյունքային ցուցանիշների հարցի վերաբերյալ քննարկում:
Հարցը ներկայացնող՝ Ա.Կոտոլյան

4. ՍՉԱՄ-ի կողմից վարվող ստուգաչափված չափման միջոցների վերաբերյալ թվային տեղեկատվությանը ՇՎՏՄ-ին հասանելիություն տալու առաջարկ:
Հարցը ներկայացնող՝ Ա.Կոտոյան

5. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024թ. 1-ին եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը:
Զեկուցող՝ Ա.Կոտոյան

6. ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին:
Զեկուցող՝ Ա.Կոտոյան

Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2024 թվականի հունիսի 13-ի երրորդ հերթական նիստը սկսվեց օրակարգի հաստատմամբ:

Տեսչական մարմնի ղեկավարը առաջարկեց օրակարգի 3-րդ հարցի քննարկումը հանել, քանի որ հարցի հետ կապված Խորհրդի անդամները պետք է առաջարկություններ ներկայացնեին, սակայն ներկայացրել է միայն Լենա Նանուշյանը: Քննարկումը ավելի արդյունավետ իրականացնելու համար նպատակահարմար համարեց հարցը տեղափոխել մյուս նիստի օրակարգ՝ մինչև մնացած անդամները իրենց առաջարկությունները ներկայացնեն:

Արմեն Կոտոյանը Խորհրդի անդամներին ներկայացրեց նորանշանակ անդամ՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ Տարոն Հակոբյանին

Օրակարգի առաջին հարցի զեկուցման համար խոսքի իրավունքը տրվեց Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանին, և քանի որ նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկումը կապված էր օրակարգի 3-րդ հարցի հետ, որն հանվեց օրակարգից, ուստի 1-ին հարցի քննարկումը ևս հանվեց օրակարգից:

Օրակարգի երկրորդ հարցի զեկուցման համար խոսքի իրավունքը կրկին տրվեց Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանին: Հարցը վերաբերում է թեր և գեր լիցքավորմամբ շահագործվող ստուգաչափված չափման միջոցների վերաբերյալ քննարկմանը: Նա հայտնեց, որ Տեսչական մարմինը ի թիվս մի շարք ոլորտների վերահսկողություն է իրականացնում նաև չափումների միասնականության ապահովման ոլորտում՝ նպատակ ունենալով սպառողներին պաշտպանել ստուգաչափման ենթակա չափման միջոցների ոչ հավաստի արդյունքներից: Մեջբերելով «Չափումների միասնականության մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ, ներկայացրեց «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից չափումների միասնականության ապահովման ոլորտում՝ մասնավորապես հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վառելիքաբաշխիչ սարքավորումների ստուգաչափման գործընթացը և տեղեկացրեց, որ Տեսչական մարմինը վերնշված ոլորտում չափագիտական կանոնների և նորմերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս պարբերաբար առնչվում է մի իրավիճակի հետ, երբ ստուգաչափման դրոշմը վնասված չէ, սակայն «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից տեսակը հաստատված և ստուգաչափված հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վառելիքաբաշխիչ սարքավորումների վրա արտացոլված ցուցմունքը չի համապատասխանում փաստացի լիցքավորված քանակին: Ստացվում է վառելիքաբաշխիչ սարքավորումը փաստացի ստուգաչափված է, ունի ստուգաչափման վկայական, իրականացվում է չափում և պարզվում է, որ առկա է կամ թելիցքավորում կամ գերլիցքավորում: Արդյունքում ստուգաչափված չափման միջոցը չի ապահովում այդ չափման միջոցի նկատմամբ սահմանված պահանջները բավարարող ճշգրիտ /օբյեկտիվ/ տվյալներ: Արմեն Կոտոյանը հայտնեց, որ սկսած 2024 թվականի հունվարից վառելիքի ոլորտում իրականացվել է չափումների միասնականության ապահովման նկատմամբ 64 ստուգում, որից 11-ում հայտնաբերվել են շեղումներ՝ 9 թերլիցքավորում և 2 գերլիցքավորում:

Նշված շեղումների ընթացքում բոլոր վառելիքաբաշխիչ աշտարակները եղել են ստուգաչափված «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարձացված խնդիրը առնչվում է սպառողների լայն շահերին, Տեսչական մարմնի ղեկավարը առաջարկեց երկու լուծման տարբերակ:

Տարբերակ առաջին՝ արտադրող կազմակերպությանը, արդեն իսկ արտադրված չափման միջոցները այնպես կարգավորել, որ ստուգաչափումից հետո բացառվի արտաքին որևէ միջամտություն, հակառակ դեպքում անվավեր ճանաչել տվյալ չափման միջոցի տեսակի հաստատումը, իսկ եթե հնարավոր չէ ապահովել առաջին տարբերակը, ապա «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից բաշխիչ աշտարակի տեսակը չհաստատել և չստուգաչափել, պատասխանատվությունը թողնելով տնտեսավարողի վրա:

Արդյունքում ծավալվեց քննարկում և Արմեն Կոտոյանը Խորհրդի անդամներին առաջարկեց ներկայացնել հարցի լուծման համար իրենց տարբերակները:

Գևորգ Պապոյանը հանձնարարեց ուսումնասիրել միջազգային փորձը, գտնել այն սարքավորումները, գտնել այն մեթոդները, օրենսդրական փոփոխությունները, որոնք հնարավորություն կտան կատարել համապարփակ վերլուծություն և առաջարկներ: Բացի այդ Գևորգ Պապոյանը կարևորեց տնտեսավարողի հեղինակության վրա ազդելու հանգամանքը, ինչպես նաև գտնել նոր գիտելիքներ, տեխնոլոգիաներ, մեթոդներ, որոնք որ հնարավորություն կտան ստուգող մարմիններին բացահայտել արդյոք առկա է արտաքին ազդեցություն և նմանատիպ բոլոր դեպքերում կարևորել ոչ թե լցակայանը փակելը կամ պաստառ փակցնելը, այլ ազդել նրա բարի համբավի, հեղինակության վրա և հնարավորինս շատ մարդ Հայաստանում պետք է իմանա և բիզնեսը պետք է իմանա, որ ինքը գնում է շատ մեծ հեղինակային /ռեպուտացիոն/ ռիսկի:

Կարեն Չիլինգարյանը թերլիցքավորումները կանխելու հարցում առաջարկեց ավելացնել նշանակվող վարչական տուգանքի չափը, կիրառել ավելի խիստ պատասխանատվություն, սակայն Արմենուհի Հարությունյանը չհամաձայնեց, քանի որ արդեն իսկ սահմանվել է տուգանքի բարձր շեմ և նրա ավելացումը համաչափ չի լինի ՀՀ-ում ստացվող աշխատավարձերին:

Քննարկման ավարտին Գևորգ Պապոյանը առաջարկեց հարցը բաժանել երկու հարցի. հարց 1՝ մինչև Խորհրդի հաջորդ նիստը կատարել ուսումնասիրություն, հասկանալ և հնարավորության դեպքում ներգրավել այս գործընթացին մեր միջազգային գործընկերներին ցուցաբերելու փորձագիտական աջակցություն, հարց 2՝ շատ ու շատ ավելի մեծ ուշադրություն դարձնել հեղինակությանը /ռեպուտացիային, բրենդին/, քան տուգանվելուն:

Օրակարգի երրորդ հարցի քննարկումը հանվեց և կտեղափոխվի հաջորդ նիստի օրակարգ:

Օրակարգի չորրորդ հարցի զեկուցման համար խոսքի իրավունքը կրկին տրվեց Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոլյանին: Հարցը վերաբերում է ՍՉԱՄ-ի կողմից վարվող ստուգաչափված չափման միջոցների վերաբերյալ թվային տեղեկատվությանը ՇՎՏՄ-ին հասանելիություն տալու առաջարկին: Խորհրդի անդամներին ներկայացվեց հարցի էությունը և ՍՉԱՄ-ի կողմից վարվող ստուգաչափված չափման միջոցների վերաբերյալ թվային տեղեկատվությանը ՇՎՏՄ-ին հասանելիություն տալու կարևորությունը ինչպես ստուգումների արդյունավետ անցկացման հարցում, այնպես էլ հետագայում իրականացվող ստուգումները թվայնացման ճանապարհով տանելու հարցում:

Նարեկ Տերյանը ներկայացրեց, որ հասանելիության տրամադրման հարցում չկա օրենսդրական արգելքներ, պարզապես խնդիրը տեխնիկական է: Արդյունքում Գևորգ Պապոյանը տեղեկացրեց, որ կձևակերպվի հանձնարարական ՍՉԱՄ-ին՝ ստուգաչափված չափման միջոցների վերաբերյալ թվային տեղեկատվությանը ՇՎՏՄ-ին հասանելիություն տալու համար:

Օրակարգի հինգերորդ հարցը ներկայացրեց Արմեն Կոտոյանը, որը վերաբերում է Տեսչական մարմնի 2024թ. 1-ին եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը հավանություն տալուն: Որոշվեց միաձայն հավանություն տալ Տեսչական մարմնի 2024թ. 1-ին եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը:

Օրակարգի վեցերորդ հարց՝ Տեսչական մարմնի Կառավարման խորհրդի հաջորդ հերթական նիստի անցկացման օրը որոշվեց աշխատանքային կարգով համաձայնեցնել Խորհրդի անդամների հետ /2024թ. սեպտեմբերի վերջ/:

Խորհրդի նախագահ՝

_____ Գ.Պապոյան
ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ Գ.Սահակյան
ստորագրություն